ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ- ԳՀԱՊՁԲ-18/183» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

- *Վայրը՝* *Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ*
- *Օրը՝* *22.05.2018թ.*
- *Ժամը՝* *15:00*

Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ իրենց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1. Ընդունել ի գիտություն, որ 17.05.2018 թվականին ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի նախատեսված տվյալների ճշտման մասին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում է կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

22.05.2018 թվականին ստացվել է պատասխան՝ ըստ որի բոլոր մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող, բացառությամբ.

- «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ - հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ 667,937.0 (վեց հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամի չափով:

Գնահատող հանձնաժողովը որոշեց «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար, մերժել և մասնակիցների կամ կոմիտեի կողմից նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը ներառյալ լրացուցիչ տեղեկատվություն չներկայացնելու դեպքում կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով սահմանված ընթացակարգը:

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

2. Մասնակիցների կողմից որակավորման պահանջների անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնահատման արդյունքները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	տվյալները
1	Ոստանիկ Հայրենյաց ՍՊԸ	անբավարար
2	Լուառ ՍՊԸ	բավարար
3	Սպորտ Սիթի ՍՊԸ	բավարար
4	Բրուս ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

3. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը հավասար են՝ գնահատող հանձնաժողովը որոշեց Սպորտ Սիթի ՍՊԸ-ին և Լուառ ՍՊԸ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա սույն թվականի մայիսի 25-ին ժամը 11:00-ին Երևանի քաղաքապետարանում (ՀՀ, ք.Երևան, Արգիշտիի 1, 224/2 սենյակ)՝ բանակցությունների վերջնաժամկետ սահմանելով 15 րոպե:

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

Հանձնաժողովի նախագահ՝ *Յու.Մամիկոնյան*

Հանձնաժողովի անդամներ՝ *Ա.Բաղրամյան*

Լ.Հարությունյան

Ա.Գասպարյան

Մ.Աբրահամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Ա. Վարդանյան*